



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՄ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏՐ
Ո. ՊԵՏՐՈՍՅԱՆ



«19 05» 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՇԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ**

ԲՓ 0090-21

Ձեռնարկողը՝

«Գոլդեն Սթորի» ՍՊԸ

Արագածոտնի մարզ, Կաքավածոր 5 փող. 1 հրբ. գուն 3

Գործունեությունը՝

*Օթևանի գուֆերի հանքավայրի հյուսիսային դեղամասում
2021-2022թ.թ. կափարվելիք երկրաբանական
ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ
Արագածոտնի մարզ*

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար՝

Գ. Գևորգյան



Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆԵԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆԵԱԿԱՆ
թիվ ԲՓ 0090-21

<19> 05 2021թ.

Արագածոտնի մարզի Օթևանի տուֆերի հանքավայրի հյուսիսային տեղամասում 2021-2022թ.թ. կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝

«Գոլդեն Սթոուն» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
/Գ կատեգորիա/

Գտնվելու վայրը՝

Արագածոտնի մարզ, Օթևան համայնք

Ներածական մաս. Օթևանի տուֆերի հանքավայրի Հյուսիսային տեղամասը վարչական տեսակետից գտնվում է Արագածոտնի մարզի Օթևան գյուղի վարչական տարածքում: Մոտակա քնակավայրերն են՝ Կաքավածոր, Ազարակավան, Կարմրաշեն, Պարտիզակ գյուղերը և Թալին քաղաքը:

Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքը ներկայացված է նպատակային նշանակության՝ գյուղատնտեսական, գործառնական՝ արոտավայրով:

Նախատեսվող գործնեությունը համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» <<օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի ա. Ենթակետի, հանդիսանում է Գ կատեգորիայի գործնեության տեսակ:

Նկարագրական մաս. Օթևանի տուֆերի հանքավայրի հյուսիսային տեղամասի երևակումում կատարվելիք երկրաբանահետախուզական աշխատանքների նախագիծը կազմված է ըստ երկրաբանահետախուզական աշխատանքների նախագծի և նախահաշիվների կազմման հրահանգի պահանջներին համապատասխան:

Հաշվի են առնված հետախուզվող տեղամասի երկրաբանական կառուցվածքը և երկրաբանահետախուզական աշխատանքների կատարման լեռնատեխնիկական պայմանները, նկատի ունենալով երևակման պարզ երկրաբանական կառուցվածքը, օգտակար հանածոյի մորֆոլոգիական ծևը և չափսերը, տեղանքի ռելիեֆը և այլն:

Երկրաբանահետախուզական աշխատանքների կատարում երևակման ընդհանուր 7.57 հա մակերեսով տարածքում, նպատակ ունենալով պարզաբանել տուֆերի որակական հատկանիշները, որոնք պետք է բավարարեն 9479 - 98 և 4001 - 98 ԳՕՍ - երի տեխնիկական պահանջներին՝ դրանց պիտանելիությունը որպես երեսապատման և ուղիղ կտրվածքի արդյունաբերությունը:



արտադրության համար:

Արագածոտնի մարզի Օթևանի տուֆերի երևակման ծայրակետային կոռորդինատները ARM WGS-84 կոռորդինատային համակարգով հետևյալն է.

1	4472828	8419374
2	4472856	8419428
3	4472777	8419561
4	4472828	8419609
5	4472844	8419763
6	4472793	8419775
7	4472712	8419775

8	4472697	8419790
9	4472611	8419794
10	4472606	8419615
11	4472641	8419615
12	4472641	8419454
13	4472733	8419390

Հետախուզական աշխատանքները նախատեսվում է իրականացնել մինչև 25մ խորությամբ 7 հորատանցքերով, հաշվի առնելով բնական մերկացումների և բացահանքի տվյալները, որոնց միջոցով կուտամնասիրվի և կնմուշարկվի տուֆերի հաստվածքը: Ըստրված հետախուզացանց և հետախուզական փորվածքների միջև եղած հեռավորությամբ 100-140մ է, որը թույլ կտա հետախուզված պաշարները գնահատել արդյունաբերական կարգով:

Սույն ծրագրի կազմման ժամանակ կատարվել է տեղամասի տարածքի 1:1000 մասշտաբի տոպոգրաֆիական հանույթ մոտ 7.57հա մակերեսով տարածքում: Նախատեսված աշխատանքների իրականացման ընթացքում, անհրաժեշտության դեպքում կկատարվի վերոհիշյալ տոպոգրաֆիական հիմքի ճշտգրտում, բոլոր հետախուզական փորվածքների և երկրաբանական սահմանների գործիքային տեղադրմամբ, որի հիմքի վրա կկազմվի տեղամասի երկրաբանական քարտեզը: Հորատման աշխատանքները կիրականացվեն սյունակային հորատման ուղղաձիգ հորատանցքերի հորատման միջոցով: Հորատումը կկատարվի կարծր համածովվածքային թագիկներով, 132մմ և 112մմ տրամագծերով, ՈՒԳԲ -1VS (ՁԻԼ131) տիպի ինքնագնաց հորատող հաստոցով:

Հետախուզվող տեղամասում օգտակար հանածոյի եզրագծման և ըստ խորության ուսումնասիրման համար նախատեսվում է հորատել 7 հորատանցք մինչև 25մ խորությամբ՝ ընդհանուր 175մ, որը ենթակա է փոփոխման կախված երկրաբանական աշխատանքների արդյունքից: Հորատահանուկի նվազագույն ելքը՝ 80%: Հորատվող ապարները համապատասխանում են հետևյալ կարգերին.

- այսուվիալ, դեյսուվիալ նստվածքներ և ուժեղ ենթավորված ու հողմնահարված տուֆեր IV կարգ,
- թարմ, թույլ ծակոտեկն տուֆեր – VIII կարգ:

Նախատեսվում է հորատող հաստոցի 7 տեղակայում և տեղահանում:

Մանրամասն երկրաբանական փաստագրման ենթակա են հորատանցքերի հորատահանուկը, բնական մերկացումները և փորձնական հանույթի բացահանքը:

Երկրաբանական փաստագրման աշխատանքները նախատեսվում է կատարել 1:100 մասշտաբով: Դրանց ծավալները հետևյալն են ըստ տեսակների.

- հորատահանուկի փաստագրում 175.0մ
- փորձնական բացահանքի փաստագրում 50մ



Տուֆերի լեռնային զանգվածից պատքարի ելքի տոկոսը որոշելու համար նախատեսվում է մեկ փորձնական բացահանքի անցում՝ 150m^3 ընդհանուր ծավալով: Նշված աշխատանքների ընթացքում կճշտվի հումքի արդյունահանման և տեղափոխման ընթացքում կատարված ծախսերը, որոնք կդրվեն հանքավայրի արդյունաբերական գնահատման հիմքում:

Նմուշարկումն իրականացվելու է հորատանցքերի հորատահանուկից, բնական մերկացումներից ու բացահանքից:

Օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական հատկությունները որոշելու նպատակով նախատեսվում է վերցնել 31 հանուկային նմուշ մինչև 5.0m երկարությամբ, 14 մենաքար բացահանքից և մերկացումներից, ինչպես նաև 2 նմուշ պետրոգրաֆիական ուսումնասիրությունների ու 2 նմուշ քիմիական կազմը որոշելու համար:

Վերցված նմուշները կենթարկվեն համապատասխան փորձարկումների, համապատասխան լիցենզավորում ունեցող ընկերության լաբորատորիայում:

Ֆիզիկամեխանիկական հատկանիշները կուսումնասիրվեն 45 նմուշներով, քիմիական կազմի վերլուծությունները 2 և պետրոգրաֆիական ուսումնասիրությունները 2 նմուշների միջոցով: Հետախուզվող տեղամասի ինժեներաբերկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների պարզաբանման նպատակով երկրաբանահետախուզական աշխատանքների ժամանակ նախատեսվում է կատարել համապատասխան ուսումնասիրություններ և դիտարկումներ:

Հաշվի առնելով տեղամասի հարթ ռելիեֆը և արդեն իսկ գոյություն ունեցող դաշտամիջյան ճանապարհները, երկրաբանական ուսումնասիրության ընթացքում հորատման հրապարակների և ճանապարհների շինարարություն չի նախատեսվում:

Օգտակար հանածոյի ճառագայթահիգիենիկ հատկությունները պարզաբանելու համար դաշտային աշխատանքների ընթացքում նախատեսվում է կատարել ուղիղութիւնական չափումներ երևակման ամբողջ տարածքում CRP-6801 ուղիղութիւնական չափիչ գործիքով:

Երկրաբանահետախուզական աշխատանքների անվտանգության ապահովման նպատակով նախատեսվում է իրականացնել անվտանգության տեխնիկայի հրահանգի բոլոր պահանջները: Հողի վերին շերտի պահպանության նպատակով նախագծով նախատեսվում է փորձնական հանույթի ժամանակ հանել հողի շերտը, պահեստավորել, իսկ աշխատանքները ավարտելուց հետո լանդշաֆտի վերականգնման նպատակով ծածկել հողաշերտով: Վերականգնումը իրականացվելու է ձեռքով: Ուկուլտիվացիայի ենթակա հողաբուսական շերտի ծավալը կազմում է 37.5m^3 ($50.0\text{m} \times 0.25\text{m} \times 3.0\text{m}$): Հորատման հարթակներ չեն կառուցվելու, իսկ հաստոցի տեղակայման վայրերում կկատարվի փիրեցում: Ուկուլտիվացիոն աշխատանքների իրագործման և հաստոցի տեղակայման վայրերի փիրեցման համար ընկերության կողմից նախատեսվում է $150000\text{հազ. ՀՀ դրամ}$:

Զրային ռեսուրսների աղտոտում տեղի չի ունենա, քանի որ տեղամասի տարածքում մակերևութային և գրունտային ջրերը բացակայում են, իսկ լեռնային աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում:

Անմիջապես երևակման տարածքում ՀՀ բոյսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցած բոյսեր և կենդանիներ ինչպես նաև դրանց աճելավայրեր կամ ապրելավայրեր չեն արձանագրվել, տեղամասը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքի և պատմամշակութային հուշարձանի սահմաններում:



Նախատեսվում է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

- նավթամթերքների պահում աշխատանքները սպասարկող բեռնատար մեքենայի թափքում / անհրաժեշտ քանակի նավթամթերք բարձվելու է բեռնատար մեքենայի թափքում և ուղարկվելու է աշխատանքների տարածք, սպասարկող բեռնատար մեքենայի լիցքավորման համար/,
- հրատաման թագագլխիկների հավաքում որպես մետաղական ջարդոն, աշխատանքների ավարտից հետո հանձնում մասնագիտացված կազմակերպություններին վերամշակման համար, կենցաղային աղբը կիավաքվի հատուկ անթափանց տոպրակների մեջ և կտեղափոխվի աղբավայրը (նախապես համաձայնեցնելով համայնքապետարանի հետ),
- արտաթորվող թունավոր նյութերի չեղոքացուցիչ սարքերի տեղադրում,
- հրատումը կատարվելու է «թաց հրատաման» մեթոդով, ինչը կբացառի փոշեգոյացումը հրատաման ժամանակ,
- նախատեսվում է աշխատանքների կատարման տեղամասերը ցանկապատել, ելնելով անվտանգության նկատառումներից,
- ոեկոլոգիկացիոն աշխատանքների իրականացում,
- խմելու և տեխնիկական ջուրը բերվելու է ավտոտրանսպորտով՝ պայմանագրային հիմունքներով,
- աշխատակիցների համար սանիտարակենցաղային հարմարությունների ստեղծում՝ հանդերձարան, սեպտիկ հոր և հանգստի սենյակ,
- բուսական աշխարհի և << բույսերի կարմիր գրքում գրանցված տեսակների պահպանությանն ուղղված միջոցառումներ,

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում «Գոլդեն Սթոուն» ՍՊ ընկերությունը իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- մքնողորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, շաբաթական մեկ անգամ հաճախականությամբ,
- օգտագործված մեքենայական յուղերով ու քայլութերով, աղտոտիչ նյութերով հայցվող տեղամասի հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ:

Պատճառաբանական մաս. Արագածոտնի մարզի Օթևանի համայնքապետարանում օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, պաշտպանության նախարարությունները ինչպես նաև Արագածոտնի մարզպետարանը: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացմանը, որոնք կրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ



- Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների մոնիթորինգ և արդյունքները ՀՀ կառավարության 2018թ. փետրվարի 22-ի N191-Ն որոշմամբ սահմանված ժամկետներում և ծևաչափով ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն:
- Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չքավարարման դեպքում՝ նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական նորմերը:
- Անհրաժեշտ է ապահովել հայտում ամրագրված ռեկուլտիվացիայի աշխատանքների իրականացումը:
- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Գոլդեն Սթորուն» ՍՊԸ կողմից ներկայացված Արագածոտնի մարզի Օթևանի տուֆերի հանքավայրի հյուսիսային տեղամասում 2021-2022թ.թ. կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով։

Տնօրենի տեղակալ՝

Մասնագետ՝

Խ. Մարտիրոսյան

Հ. Մեսրոպյան



Ընդամենը՝ 5 էջ